



ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

— Կարգացած էք «Լիսան իս
Հալոյի Սեպտ. 3 թիւին մէջ Ազա
գարեանի պարագանն և ինչ է ձե

— Ազգադարձանի յայտարարութիւնները, հրատարակուած «Լիստն իւլ Զար»ի Սեպտ. 3 թիւերն մէջ, ճշմարտութիւններ են: Բոլոր Լիւրանանցիներ եւ Սուրբապի աղագայնականներ հաստատած են անոր գլխաւորները: Մասնաւոր կերպով ինչ նման հայերու բարեկամ եղողներ ճիշդ կը գտնեն այդ յայտարարութիւնները ոչ թէ մէկ կուսակցութեան այլ բովանդակ հայերու ապահովութեան համար:

Հայերու անջատ ապրելու եւ անդալցիներու հետ ունեցած վարուելակերպի պատճառաւ բոլորակամ մը սկսած է հայերու գէմ-հետեւարար Պր. Ազգադարձան լուծաւայութիւն մը բրած է հայկական գաղտնի Զէյթան Զէյթան ի «Լիստն իւլ Զար»ի խմբագրին արտայայտուելով եւ լուծաւայութիւն հայերու գաղափարները հանդէպ անդալցիներու: Բացատրելով թէ գաղափարները չեն կազմեր մեծամասնութիւն, իսկ հնչակներ եւ ուրիշ մասաներ չեն հետեւիր անոնց ուղիին:

Եւ կը խորհիմ որ հայեր պէտք է փոխեն իրենց ներկայ ուղղութիւնը եւ հետեւին Պր. Ազգադարձանի ցոյց տուած ուղղութեան, իրենց բարօրութեան համար, ինչ որ մեր ամենուս փափաքն է: Անձամբ կը ճանչնամ Պր. Ազգադարձանը, զայն փառաբանող չեմ գտնել ալ հաւատարիմ իր ազգին եւ երախտագէտ հանդէպ Լիւրանանի, որ հիւրասիրած է հայերը:

Եթէ հայեր կ'ուզեն ատել մեր գաղափարը սիրող անձ մը, սա կը նշանակէ թէ հաւատարիմ չեն մեզի ու կ'ուզեն մեզմէ անջատ ապրել:

— Ինչ խորհուրդ կուտաք հայ հակամարտ հոսանքներու համերաշխութեան համար:

— Կուսակցութեանց ներկայացուցիչները պէտք է կազմեն հաւաքով մը, գաղափարի փոխանակութիւն ունենան անդալցի մտաւորականներու հետ: Այդ տեսակ հաւաքովի մը պիտի փափաքէինք ներկայ ըլլալու ամենայն սիրով պատրաստ եմ այդ հաւաքովին ներկայ ըլլալու եւ պարզելու տեղացիներու բաղձանքները: Իմ ինչպէս նաեւ բոլոր Լիւրանանցիներու բաղձանքն է որ հայերը միան միշտ հոս եւ մեզի չափ պատասխանատու ըլլան Լիւրանանի բարգաւաճման: Եթէ Լիւրանանի եւ Լիւրանանցիներու նպատակին չեն ծառայիր, հայերը հայրենադուրս են:

Հպատակութիւնը դուք ուզեցիք ու արուեստաւ ձեռք Առ այս առիթ լայն լուսարարութիւններ պատրաստ եմ տալու միջկուսակցային հաւաքովի մը մէջ:

Մեր աղագային ու այլ տոնական տարութեանց տոթիւ ինչու հայ եկեղեցական եւ աշխարհական ներկայացուցիչներ իրենց մտաւորականութիւնը չեն քննարկող քափաքինք որ մեր ուրախ կամ տխուր բոլոր աղագային տոններն հայեր ալ ժամանակին իրենք Լիւրանանցիներ:

— Ինչ պատճառաւ գործեցուցուած է «Լիստն իւլ Զար»:

— Սխալ է կարծել թէ «Լիստն իւլ Զար» փակուած է հայկական ծանօթ հարցի շուրջ Պր. Ազգադարձանի յայտարարութիւնները հրատարակած ըլլալով: Անիկայ գաղափարներն են միմիայն կառավարական շահերու եւ արժանապատուութեան շուրջ գրուած մէկ յօդուածի մը պատճառաւ:

Մինչ Պր. Ժօզէֆ Զախեա հրաժեշտ կ'առնէր, կատակի ձեռով ու խնդրով հարցուց թէ Ձեր թերթը «Լիւրանանցիներ» կրկնով հանդերձ, երբէք Լիւրանանի պաշտօնական լեզուով հրատարակութիւններ չընեն:

Կը պատասխանէր թէ սիրով տեղ կը տրամադրենք մեզի համար ցարգանքի արժանի լեզուով կատարել:

ԹՐԲ. ԼՈՒՐԵՐ

ՖԵԹՅԻ ՊԵՅԻ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ

ԿԱԶԻ ՓԱՇԱՅԻ ՆԱՄԱԿՆ ԱՌՔԻ

Երէկուան եւ այսօրուան միջեւ փոխուած ամենափոքր կէտ մը իսկ չկայ: Ձեզի կարգաւ բաւական առաջ ստացած մէկ նամակս լիստնանակին մէջ կազին կ'ըսէ իմէջ այլոց:

«Երևաւարդութեան ի վեր իմ պաշտպանած եւ սիրած մէկ զրուսթիւնը այն եղած է որ, ազգին գործերը ազատօրէն վիճարանունին կողմ: Մեծ Ժողովին մէջ եւ ազգին առջեւ, բարեացակամ անձերն ու կուսակցութիւնները իրենց կարծիքները հրապարակ գնեն եւ փնտռեն ազգին բարձր շահերը:

Կրնաք վստահ ըլլալ որ, հանրապետութեան նախագահ զտնուած միջոցիս, ինծի վստահուած լուրջ եւ օրինական պարտականութիւնները արգարօրէն եւ անկողմնակալօրէն պիտի կատարեմ կառավարական եւ ոչ-կառավարական կուսակցութեանց հանդէպ, եւ թէ աշխարհիկ հանրապետութեան հիման վրայ ձեր կուսակցութեան ունենալիք բոլոր տեսակի քաղաքական գործունէութիւնները ունէ արգելքի չպիտի հանգրայնուի:

Ձեզի պէյ տմբող նամակը կարգալէ վերջ ըսաւ: «Սէրպէս ձերմուրիէթ կուսակցութեան գերջը այս նամակէն որոշակի կը հասկցուի, մեր կողմէն անհամապատասխան յայտարարութիւն մը տալով չէ քշուած: Հետեւաբար կառւած չկայ թէ բացարձակապէս անհիմն են այն գրոյցները որոնց համաձայն իբր թէ կազի փաշան իւրեքն հեռացած եւ ուրիշ կուսակցութեան մը մէջ մտած է»:

«ՀԱՄԻՍ ԶԱՆԻ ՊԱՐՏԱԿԱՆ ԶԵՄ»

Ձեզի պէյ այսօր Պալքէսի պիտի երթայ եւ անկէ Պանարմա անցնելով, ուրբաթ իրեկուն հաւանակն է որ Պոլիս գտնուի:

Իզմիրի թերթերուն տեղեկութեանց համաձայն, օտարկանական տնօրէն Էօմէր պէյ, ներքին գործաւարին հրամանով, Ձեզի պէյին հեռաձայն ըրած եւ հարցուցած է թէ Իզմիրէն վերջ ո՞ր տեղերը պիտի երթայ: Ձեզի պէյ պատասխան չէ տուած: Ասոր վրայ, օտար գործը հրամանատարը պանդոկ գալով, նոյն խնդրանքը կրկնած է: Ձեզի պէյ ըսած է թէ ազատ ճամբորդելու իր րաւունքը ունի եւ ուր որ ուզէ կըրնայ երթալ: Երկուսն աւելցուցած է թէ կուսակցին պիտի հարցնէ որ իր ազատ ճամբորդութեան արգելք ըլլալու վիճակ մը կ'աճի, եւ թէ իր աննշխար պատանխանին վրայ պիտի որոշէ իր ընկերքը: «Ճամբորդութեան ժամանակ ոչ ոքի տեղեկութիւն տալու պարտաւոր եմ», ըսած է Ձեզի պէյ:

ԽԱՆՈՂ ԵՒ ԹՈՒՋ ԿԸ ՆՈՒԻՐԵՆ

Ձեզի պէյ Սյուրենէն ինքնաշարժով վերադարձաւ եւ երեք կայան վերջ միայն չորեկաւք նստու: Այս երեք կայաններուն միջեւ, Ժողովուրդը կողմնորոշ խողով եւ թուզ կը կրէր ըսելով թէ Ձեզի պէյ պիտի տան: Բայց Ձեզի պէյ չուզեկաւ ընել մէջ չգտնելով, այս անուշ աւանդները լրագրողներուն կը յանձնէին:

ուպժ մօմէն աշխատակցութեանց: Մերթ լնդ մերթ իր աշխատակցութիւնը սիրալոյս արամադրելու խոստումով կը բաժնուի մեզմէ: (Կերը)

ՋԵՐՄ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ ԱԿԶԻՍԱՐԻ ԵՒ ՊԱԼԵՔԵՍԻՐԻ ՄԷՋ

Ճամբան, Ձեզի պէյ համակրական մեծ ցոյցերու առարկայ եղաւ: Ամէն կողմ ժողովուրդը լեցուած էր կայարանները: Ազգիսարի մէջ շատ աւելի մեծ եղան ցոյցերը: Ձեզի պէյ հոս ճառ մը խօսելով ըսաւ:—

«Թարգելի Ազգիսարցիներ, ամբողջ հողիով շնորհակալ եմ ձեր համակրական ցոյցերուն համար: Մեր կուսակցութեան սկիզբունքներն են—վիճարանութեան ազատութիւն, մասնաւոր ազատութիւն եւ աւետուրի ազատութիւն: Ամբողջովին օգտուելով հանրապետութեան տուած իրաւունքներէն, գաղափարական հողի վրայ պիտի պայքարինք այս նպատակներու յաջողութեան համար: Վիճարանութիւնները պիտի ըլլան այնպէս, ինչպէս վայել է քաղաքակրթ ու բնկերային հաստեղութեան տէր անձերու:

«ՏԿԱՐՈՒԹԵԱՆ ՆՇԱՆ Է...»

Մեր ամբողջ զենքը բնորական իրաւունքն եւ վիճարանութեան ազատութենէն օգտուելն է: Եւ քանի այս զենքը կայ մեր ձեռքը, շատ գիւրդին պիտի ըլլայ առաջըն առնել կարգ մը գէշութեանց եւ անկանոնութեանց: Ներկայիս գոյութիւն ունեցող գէշութիւնները եւ անկանոնութիւնները դատապարտուած են հաւելու հանրապետական սկզբունքներու առջեւ, ինչպէս ձեռք կը հալի Օգոստոսի արեւին տակ:

ՆՈՐ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆԸ ԱՏԱՆԱՅԻ ՄԷՋ

«Աօն Փօսթա»յի Ատանայի թղթակցը կը գրէ թէ, բազմաթիւ երկրագործներ եւ արհեստագործներ պատրաստութիւն կը տեսնեն ջերմ ընդունելութիւն մը ընելու նոր կուսակցութեան այն պատուիրակին, որ մօտերու պիտի գալ կազմակերպելու Ատանայի շրջանը: Երկրագործները որոշած են մինչեւ Նիկիէյի կայարան երթալ եւ դիմաւորել նոր կուսակցութեան պատուիրակը, Տօքթ, Պիւր-հանէտին պէյը, որ գեռ Անթալիա կը դռնուի: Պատուիրակը այստեղի կազմակերպութիւնը աւարտելուն պէս Ատանա պիտի գայ:

Թէեւ կ'ըսուի թէ Ատանայի երեսփոխաններուն մէկ մասը նոր կուսակցութեան յարած է սակայն կարելի չեղաւ օտարկի այդ շուրջ, միայն օտարկուեցաւ որ երեսփոխան եւ քննիչ Հիլմի պէյ գեռ որոշու մէջ տուած:

ԱՐԱՐԱՏԸ ԳՐԵԹԷ ՍԼՔՈՒԱՏ

Արեւմտեան, հարաւային եւ արեւելեան կողմերը ամբողջովին մաքրուած են: Հիւսիսի կողմի վերջին հրոտախուժի ալ ամէն կողմէ պաշարուած է: Աւաղակները մեծ կորուստ կրեցին:

ՕՈՒՄ. ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՐՏԻՔ

Մօն Լիպանի երեսփոխան Միշէլ Զաքարու նկատելով որ Անգարա իր վճարելիք պարտքերուն համար նոր պայմանագրով ստացած է. Վարչապետին ներկայացուցած է գիր մը խեղդելով որ կառավարութիւնը բաւակցութեան մտնէ Բ. Գոմիսէրութեան հետ ներկայ տարուայ վճարելի գումարներու տուաբան համար:

ԵՐԿՐԱԳՈՐԾՆԵՐՈՒ ՎԱՐԿԻՔ

Վարչապետը Գրէտի Ժօնիէ Տ'Ալթէրի եւ Թիւրիզի հետ բանակցութիւններու սկսած է ի նպատակ իրանացի երկրագործներու 7 1/2 0/0 առ հարկէր տեղիւնով փոխադրութիւն մը կնքելու համար: Սոյն տոկոսի 3 0/0 պիտի երաշխաւորէ կառավարութիւնը:

ԱՆԹԻԼԻԱՍԻ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Անթիլիասի շէնքերը կիլիկիոյ կաթողիկոսութեան արամագրող պայմանագրութիւնը ստորագրուեցաւ Պէյրութի մէջ 1930 Ապրիլ 7 ին, Նիւ Իսթի քարտուղար Մր. Պարքէյ Էլիսընի եւ Կիլիկիոյ Վեհ. Սահակ Կաթողիկոսին կողմէ: Պայմանագրութեան իրակ վկայ ստորագրեցին նաեւ Աթոռակալ Գեր. Բարպէյ Եպիսկոպոս Մր. Մարչ եւ Պ. Լիւնոն Զէնեան:

Պայմանագիրը որ անգլիերէն է եւ կը բաղկանայ ութը յօդուածներէ, «Սիոն»ի վերջին թիւէն կ'արտագրենք 807. 1.— կը յիշէ պայմանագիր կողմերը:

807. 2.— Վարձակալութիւնը հինգ ամեայ է, 1930 Յուլիս 1 էն մինչեւ 1935 Յուլիս 30: Երբ վարձակալը ուզէ երկարել այս պայմանագրով պէտք է որ իր փափաքը յայտնէ այս մասին ապահովագրեալ նամակով մը պայմանագրութեան լրանալէն երեք ամիս առաջ:

807. 3.— Վարձակալը կը խոստանայ որ չէնքերը բացարձակապէս պիտի գործածուին կաթողիկոսութեան եւ դպրոցի համար, ուր պիտի պատրաստեն եկեղեցականներ եւ ուսուցիչներ հետեւեալ պայմաններով:

Ա) Դպրոցը պիտի վայելէ օժանդակութիւնը յանձնաժողովի մը որ կազմուած է Նիւ-Եորքի մէջ Նիւ Իսթի եւ Ամերիկայի հայոց ներկայացուցիչներէն:

Բ) Դպրոցի վերատեսուչը եւ ուսուցչական մարմինը պիտի նշանակուի Վեհ. Կաթողիկոսի կողմէն եւ պիտի հաստատուի Նիւ Եորքի յանձնաժողովին կողմէ:

Գ) Երկու կողմէն կ'որոշեն դպրոցը բռնալ յառաջիկայ աշնան:

807. 4.— Դպրոցի բացումէն առաջ անոր վարչական մեթոտին, առարկաներուն եւ ուսուցման ծրագրին համաձայն մէկ վաւերագիրը պիտի պատրաստուի Ն. Ս. Սմաթիւն Սահակ Կաթողիկոսի կողմէն խորհրդակցութեամբ Աթոռակալի Գեր. Տ. Բարպէյ Եպիսկոպոսի Գեր. Շաւշ Թ. Վրդ. Գոսպարեանի եւ պիտի զրկուի վերոյիշեալ յանձնաժողովին:

Թէ չէնքերու գործածութեամբ, թէ Նիւ Եորքէն ապահովուած նիւթական օժանդակութեան տեսականութիւնը կախուած է Ժողովին համաձայն ձեռք բերուելիք արդիւնքէն եւ ազդուութիւնէն:

807. 5.— Տարեկան վործքը մէկ տոլար է:

807. 6.— Վարձակալը պարտաւոր է լուծ վիճակի մէջ պահել կալուածը ոչ մէկ ծառ պիտի կտրուի, ոչ ալ ունէ փոփոխութիւն պիտի կատարուի չէնքերուն վրայ առանց կալուածատիրոջ հաւանութեան:

807. 7.— Վարձակալը իր վարձակալութեան շրջանին պարտաւոր է վճարել կալուածատուին ինչպէս նաեւ գոհացում տալ կառավարութեան կամ քաղաքապետութեան պահանջներուն:

807. 8.— Վարձակալը կրնայ տրամադրել կալուածը:

ՄԱՋ ՄԷԿԼԱՆ ԶԱՏԷ ՐԻՖԱԹ ՊԵՅԻ

Հալէպի «Վահագն» թերթի տրամադրութիւն մէջ անցեալ Ուրբաթ օր յանկուրտման եղած է ծագումով քուրդ եւ 150 նոցներէն Միւլան Զատէ Րիֆաթ պէյ, ծանօթ մտաւորական ու հրապարակիր: Իրաւաստանք ու հակաթուրք ոգիով միշտ հալածուած Թրքական ու քիմալական կառավարութիւններէն:

Մեր ցուակցութիւնները վահագնի խմբագրութեան ու իր պարագաներուն:

ԿԱՐԴԱՅԷՐ ԵՒ ՏԱՐԱԾԵՑԷՐ

«ԼԻՐԱՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ

ՏԵՂ. ԼՈՒՐԵՐ

ՀԱՄՐԻ ԵՐԱՇԽԱՌՈՐՈՒԹԵԱՄԲ ԱՐՁԱԿՈՒԱՏ

Հարցաքննիչ գատաւորի գիմու- մին վրայ խառն գատարանը հաւա- նած է 2000 հնչուէն սակիի երաշ- խաւորութեամբ արձակել Օննիկի պալանիչ Ճապրին, հիմնուելով Ֆ- րանս. պատժական օրինագիրքի 111 րդ յօդուածի արամադրութեան ո- ղով հիւանդ և ծիր ամբաստանեալ- ներու կ'արտօնուի մեծագումար ե- րաշխաւորութեամբ արձակուելու:

Ն. Վ. Շէյխ Թան Պէյրութի Մէջ
Սուրիոյ Հանր. Նախագահ Ն. Վ. Շէյխ Թան ամսույս 17ին, ելեւտա- նախարար Պր. Թէվֆիգ Շամիէի հետ Պէյրութ ժամանելով տեսակցեցաւ Բ. Գոմիսէի փոխանորդին և Լիզի. փարտուղար Պր. Հօրընօի հետ:

Երկրաւարժ եւ անճիւղ

Հալէպի Մէջ

Անցեալ շաբաթ երեկոյին, հեղ- ձուցիչ տաքին յաջորդած են սա- տիկ անձրեւներ. ապա կրկին տի- րապետած է տաքը որու յաջորդած է երկու րոպէ տեղով երկրաշարժ ու անձրեւ:

Համայնաւար Թուրքիկներ

Հալէպի մէջ ալ ոստիկանութիւ- նը ձեռք անցուցած է համայնաւար թուրքիկներ Պէյրութի մէջ հլածին նման սակայն կարելի չէ եղած հասկնալ ցրուողին ինքնութիւնը:

Ինչպէս Ձերակալուեցաւ

Համայնաւար Թուրքիկ Յրուողը
Բշ. երեկոյեան ժամը 7,15 ին. ծառո Նաւըր անուն ոստիկանը Պարուտի փողոցի մէջ նշմարեց կա- կածելի անձ մը որ անցորդի մը տու- աւ թուղթ մը ոստիկանը իրելոյն ու- ղեց ձեռքակալել բայց անոր զիմազ- րութեան վրայ սկսաւ սուլել. որու վրայ իրելոյն հոն եկան պր. Սէլիմ Թիւրք, ոստիկանական քարտուղարն ու ոստիկան մը և ցրուիչը առաջնորդ ցնցին պահականոց: Թուրքի Վրայ գտնուեցան 59 օրինակ թուրքիկներ զոր 15 զրուշի փոխարէն յանձնառու եղած էր ցրուելու:

Երկաթագործի գործաւոր ու շատ խեղճ հագուած ցրուիչը, որ կը կո- չուի Խաչերեան, կը բնակի Քէմփի մէջ:

Խմորատիպով և կապոյտ մելա- նով ընգօրինակուած ու արաբերէնի թարգմանուած այս թուրքիկները մի քանի շաբաթ ստալ ցրուած թու- ցիկներու իմաստը կը պարունակէին

Ահաւաստիկ թարգմանութիւնը

Ո՞վ Բանուորներ

Ազգայնական կուսակցութիւնը խտտացած էր որ եթէ Սուրիոյ ար- գի կայսերապաշտ կառավարութիւնը փոխուէր ու ձէմիլ Մարտամ պէյ և իր կուսակիցները իշխանութեան գ- լուի անցնէին, կուսակցութիւնը պատրաստ էր մասնակցելու ընտրու- թեանց:

Ասիկայ կը նշանակէ թէ

1. Կուսակցութիւնը ընդունած է երկրի քաղաքական բաժանումը:
2. Դաւաճանած է Անկախու- թեան սկզբունքին:
3. Ընդունած է համագործակցիլ էմբէրլաիզմի հետ և գործել ըստ կամաց:

Սուրիական Գոմիսիստ բարձրին գձեղ կը հրաւիրէ պոուլացներու եւ հարուածելու զաւտճանները և արգի լելու զանոնք ձեր անունով Բարձրին ծախելէ և ձեր շահերուն համար կ- ուտելու Ազգայնական կուսակցութե- ան և էմբէրլաիզմի գէմ:

Անկցի՜ Էմբէրլաիզմը:

» Դաւաճան Պուրժուապին
Կեցցէ Սուրիական ամբողջա- կան Գոմիսիստները:

ԵՐԿՐԱՇԽԱՎԱՆ ՄՏԱՅՆՈՒԹԻՒՆՆԵՐ

Հնգհանրապէս Եւրոպական ու Ամերիկեան երկիրներուն մէջ երկ- րաշինական բարձր ձգտումներն ու մտայնութիւնները որքա՛ն անհուն- օրէն կը տարբերին Արեւելեաններէն և ասոնք որքա՛ն պզտիկ և սահմա- նափակ կ'երեւին առաջիններուն հանդէպ: Այդ երկու հակընդդէմ գա- ղափարներու տարբերութիւնները բացէն ցոյց տալու՝ և տեղական ա- րաքաղիք օրաթերթերէն ոմանց օրի- նակառութեան համար պէտք կը տեսնեմ որորեւ մալ թարգմանու- թիւնը հատուածի մը այն տեսակ- ցութեան՝ զոր կատարեց վերջերս «Էլ Մարատ» շաբաթաթերթին թըղ- թակիցը, Բամիզ, Պրազիլիոյ Դես- պան, «Սինետր Լօփս տը Սօսա Տան- գէս»-ին մօտ և որուն մանրամասն նկարագրութիւնը կարգացի Դոյն թերթին 14 Սեպտ. 930 թուահամա- րէն երրորդ էջին մէջ կատարեալ հիացումով:

Ահաւաստիկ անոր սեղմ թարգ- մանութիւնը.

«Սուրիացիներն ու Լիբանան- ցիները Պրազիլիոյ մէջ կը կազմեն կարեւոր գաղութ մը երկրիս մեծ ծառայութիւններ մատուցանող. ա- նոնք մեր Հանրապետական գործառ- նութեանց գործօն մէկ անդամը, հիմքը դորձած են այսօր: Անոնք ժողովան ժողովուրդ մըն են իրաւի, իրենց իրականացուցած արդիւնքնե- րուն, իրենց աշխատութեամբ հա- սած են և կը հետաքրքրուին մ ր երկրին շահերովը իրենց յուն-հայ- րենիքին հանդէպ ունեցած նախան- ձաւորութեամբ: Եւ մենք զիրենք կը նկատենք մեզմէ և իբրեւ զաւակ- ները մ ր երկրին և անոնք երկրիս հողագործութեան և ձեռնարկատա- կան վերականգնումին մեծապէս նը- պաստած են: Այս առթիւ, այդ սի- րելի գաղութը ստացած է բարձր կացութիւն մը որուն կը բարձրա- խանձին մեր միւս գաղութները:

Արդարեւ մեր երկիրը այսպիսի մարդիկներու յետին ծայր պէտք ունի և ան իր գուռները թեւատա- րած կը բանայ զանոնք գիմաւորե- լու և իրենց պէտքերը հոգացող օգ- նութիւնները փութացնելու համար: Եւ մենք ամենայն սիրով կընդու- նինք բոլոր այն օտարականները ու բոնէ աշխատել կուգեն:»

Պրազիլիոյ նման զարգացած եր- կիր մը «այսպէս» կը մտածէ և այս- պէս կը վարուի իր Սուրիացի և Լի- քանանցի գաղութներուն հետ որոնք հարիւր հազարներու կը հասնին. և արդեօք անոր ՅՍՏԱԿԱՏԵՍ Դեսպա- նին այդ բացատրութիւնը ինքնին խորհրդաւոր պատասխան մը չէ՞ վե- րոյիչիսլ մի քանի թերթերուն հայ- գաղթականներու գէմ մերթ ընդ մերթ գրածներուն, այս երկրինե- րուն համար որոնց զժողովարար արմաթի բերքն իսկ՝ գեւ իր ներ- քին պէտքերուն հազիւ հարիւրին 18ը միայն կը հայթայթէ: Ինչպէս յայտ- նուեցաւ վերջերս հրատարակուած 1929 տարուան պաշտօնական վիճա- կացոյցէն:

Ասով մէկտեղ մենք շարունա- կենք, այս երկրին հանդէպ երախ- տագէտ սիրտերով մեր կարելի ծա- ռայութիւնները մատուցանելու պարտականութիւնը:

Մ. ՉԱՏԸՐՁԵԱՆ

Կեցցէ Ամբողջական անկախու- թիւնը.
Կեցցէ Բանուորական և աշխա- տաւորական կառավարութիւնը:
Կեցցէ Սուրիական Գոմիսի- ստ կուսակցութիւնը:
15 Սեպտ 1930
Աուր. ԴՈՄ. Կուս. Կեդր. Զօմիթէ
Քշմազգ. Գոմիսիստ Մասնաճիւղ

ՄԻՇ ԱՆ ԱՂԱԶԱՐԵԱՆ

ԲԱՑԱԾ Է ԻՐ ԳՐԱՍԵՆԵԱԿԸ ՊԵՅՐՈՒԹԻ ՄԷՋ

ԳԻՄԵԼ.— Mihran Aghazarian B. P. 606 Beyrouth
10—1 [Gr. Liban]

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Խոռվութիւններ Աննամի Մէջ

Աննամի հիւս. կողմը խոռվութիւններ ծագած են. Կաղթային Նախարար քննութիւն բացած ըլլալով հաղորդագրած է թէ խը- ռոյութիւններ կազմակերպուած են Գոմիսիստներու կողմէ:

Գերման Ընտրութիւններ

Ընտրութեանց արգիւնքը հետեւեալն է.
143 աթու ընկերպարականներ, 107 արմասականներ, 76 կեդ- ռոնականներ, 41 ազգայնականներ, 29 ժողովրդականներ, 23 խը- նայողականներ, 20 կողմնակցականներ, 19 կաթոլիկ պալերիա- ցիներ, 18 երկրագործականներ, 14 քրիստոնեայ ընկերպարական- ներ, 6 գիւղացիներ, 5 պանպանդականներ, 3 ժողովրդականներ, 3 հողագործական լիկ: Ընտրողներու թիւը եղած է 36 միլիոն իսկ ընտրուողներու թիւը 575:

Ընկերպարականներ Նաւաշինութեան Դէմ

Հոլանտացի ընկերպարականներ հակառակ տեղասարափ անձ- րեւներու Ամսթերսամի եւ Րօթերսամի մէջ կասարեցին մեծ ցոյցեր կառավարութեան կողմէ 10 տարուան մէջ շինուելիք 10 միլիոն սթերլինը նոր նաւերու շինութեան դէմ:

Թուրք Ազգ. Մեծ Ժողովը եւ Տնտես. Տագնապ

Ազգ. Մեծ Ժողովը Սեպտ. 22-ին պիտի գումարուի քրական դրամը կայո. նացնելու եւ տնտեսական տագնապը դարմանելու հա- մար: Պիտի վիճարանին ժողովրդական եւ Ազգ. Հանրապետական կուսակցութեանց ներկայացուցիչները: Քէթիի պէյ ներկայ պիտի գտնուի:

Սովիէթ Տուն Փարիզի Մէջ

Սովիէթ կառավարութիւնը Փարիզի մէջ ծախու առած է, Սէն Դիուս դուան մօտ, յարկաբաժին մը որ Ֆրանսայի առաջին սովիէթ տունը պիտի անուանուի ուր պարտաւորիչ կերպով պիտի բնակին բոլոր սովիէթ պաշտօնեաներն իրարու հետ աւելի մօտէն շփուլ ու- նեցնալու համար:

Հակակրօնական Պայքար

Լէնինկրափ Ս. Իսահակ մայր եկեղեցին վերածուած է հա- կակրօնական թանգարանի: Մեծ խորանին վրայ զետեղուած են հակակրօնական Ֆիլմեր:

Համայնաւար Շարժում Յունաստանի Մէջ

Ոստիկանութիւնը Աթէնի մէջ ձեռք անցուցած է համայնաւար փարգութեանց յասուկ թղթաւորներ. յետ քննութեան հաստատուած է թէ Յունաստանի գիմուորական եւ ծռլային ոյժերու մասին տեղեկագիրներ ղրկուած են Մոսկովա: Ձերակալութիւններ կա- տարուած են:

Իտալ. եւ Սերպ Յարաբերութիւնը Չգտուած

Թրիէսթի Փօփօլա թերթի պէմ յարձակած ֆանի մը սերպ ա- հաբեկիչներու դատապարտութեան պատճառաւ ձգտուած է Իտալիոյ եւ Սերպիոյ յարաբերութիւնը:

Պր. Կրանի Ազգ. Դաւանակցութեան իտալական պատուիրակը, ժընէվէն ստիպողաբար Հռոմ վերադարձած է:

Սրտգր Փառա եւ Եգիպտոս

Վարչապետ Սրսգր փառա իր սեփական միջոցներով յաջողած է կարգը հաստատել Եգիպտոսի մէջ ու պաշտպանած օտարական- ները: Դիտաւորութիւն ունի վերսկսելու Անգլիոյ եւ իր խզուած բա- նակցութիւնները:

Բրոժ. Գլօսի փորձը

Քրանսացի գիտնական Բրոժ. Ժօրժ Գլօս ի մօտոյ փորձ մը պի- տի կատարել ծովու ջերմութիւնը օգտագործելու համար:

ՃԵՐԶԻ ՊԵՅ ԷՆԿԻՐԻԻ ՄԵՋ

ՃԵՐԶԻ պէյ հոս եկաւ: Ահագին բազմութիւն մը զինք գիմաւորելու զմաց, խանդավառ ցոյցեր կատարուեցան եւ բողոքի արտայայտութիւններ տեղի ունեցան տուրքերու դէմ: Նփոքութեանց միջոցին շատեր վիրաւորուեցան եւ բազմաթիւ ձերբակալութիւններ եղան:

ՏՕՔԹ. ԳԵՈՐԳ ԿԵՐԿԵՐԵԱՆ

Վ. Կայեալ Laureat մախկին Interne եւ այժմ Chef de clinique Ֆրանսական Համալսարանի հիւնդանոցի Ա.Զ.ԲԻ, ԲԹԻ, Ա.ԿԱՆ-ՋԻ, ԲԵՐՆԻ, ԿՈԿՈՐԻԻ եւ գլխի բաժնին:

Հիւնդ կ'ընդունի կէս օրէ վերջ ժամը 2-6 Rue de Damas No. 15 իր դաստիարակները եւ ի հարկին կը փոխադրէ հիւանդանոցը:

Վ. Կայեալ արժանանալի:

12-5

ՓՆՏՈՒՆՅԵՔ ԵՒ ԳՈՐԾՈՒԹԵՑՆԵՐ

հայկական լաւագոյն եւ առողջապահական

ՄԱՆՈՒԿԵԱՆ ՍԻԿԱՐԷԹՆԵՐԸ

CIGARETTES MANOUKIAN

ԶԱՆԳԱԿ, ՀԱՅ ԶԱՅՆ, ԱՄԱՆՈՍ, ԼԻԻՔՍ
Համաժամանոր անուանուող

Որոնք իրենց առաւելութիւններով կը գերազանցեն տեղական բոլոր սիկարէթները, ՄԱՆՈՒԿԵԱՆ սիկարէթները կը ծախուին Ընկերութեան Ֆաբրիկայէն: Շրջակայ գործարարները եւ բոլոր ծխախոտաւորները քով: Լիբանանի եւ Սուրիայի բոլոր կողմերէն կատարուած մեծաքանակ եւ փոքրաքանակ յանձնարարութեանց համար ճշգրտապէս եւ խղճամիտ գոհացում: Օրական 40000 սպառում:

ՄԱՆՈՒԿԵԱՆ ԵՒ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Փոխարկող 718 Պէյրուս (Լիբանան)

ՏՊԱՐԱՆ ԼԻԲԱՆԱՆ

Պուրճ - Իթալի փողոց թիւ 9 = Պէյրուս

Կը պատրաստուին՝

ԴՊՐՈՑԱԿԱՆ ՊԻՏՈՒՆՆԵՐ. — Տեղաւոր, Դիք (գործարարական, գրական ու վիպական):

ՀԱՅՆԵՐԸ ԶՐԱՆՄԱՆԵՐԸ ԵՒ ԱՐԱՐՆԵՐԸ. — լեզուներով. կատանձնէ Տպագրական կամ Հրատարակչական, ամէն տեսակ գործեր երկը լեզուներով, նաեւ տուեալ տեսակ ամէն տեսակ գործեր ինչպէս նաեւ Հարսանական Հրատարակչական:

Տուփի գործատու

Կը պատրաստուին: Շաքարի, Լոգուժի, Ծօղալի, Կոշիկի, Դիզարանի, Եապիկի ԱՄԷՆ Տեսակ տուփեր քաղցր եւ պատկերներ:

Յոյժ պիւրամասշտիկ պայմաններ եւ խնամաւոր ճշտապահ գործ:

Հանի Պալեան եւ Եղբարի

ԱՌԱՋԱԿԱՐԳ ՀԱՅ ՈՍԿԵՐԻՉ

Կը պատրաստեն ամէն տեսակ նուրբ ու գեղարուեստական զարդեղէններ, ապարանջան, մատանի, պոռններ, օղ եւ այլն:

XX Յոյժ գիւրամատչելի պայմաններ եւ կատարեալ ճշգրտութիւն: XX
Հասցէ, Պոլիճ. Ոսկերիներու շուկայ թիւ 101 = Պէյրուս

ՊԱՆՏՐՈՒԻ ԿԱՆՈՆԱԳԻՐ

Ա. Մաս

ԲՆԴՆ. ՏՐԱՌԱՌՈՒԹԻՒՆՆԵՐ

Յօդ. 1. Ստրիպան Տէրութեան հոգեւորական մէջ ծխախոտի մշակութիւնը, շինութիւնը եւ առեւտուրը: Թէմպէթիկ մշակութիւնն ալ պարտաւանակող ներկայ կանոնադրի արտադրութեան համեմատ ազատ է:

Ծխախոտէն եւ թէմպէթիկէն պահաւորի ձեւով շահատուրք մը պիտի գանձուի:

Բ. Մաս

ԾԽԱՆՈՒՄԻ ՄԵՇԿՈՒԹԻՒՆ

Յօդ. 2. Ծխախոտ մշակելու ուղղութիւնն անձ, ամէն տարի փետր. 15 էն առաջ գործարարութիւնն ենթակայ ազգաբարձրով եւ իր գիւղի մուխթարի միջոցաւ մշակելիք ծխախոտին տեղը: մշակելի հոգին տարածութիւնը, մշակողին, հազարաթիւնը քանի տարածակիւն անուշը եւ մշակելի:

Դէք ծխախոտի անուշը պիտի տեղեկանէ մէջ միւստիքին, որ անոյն տղաբարձրութիւն փոխան պիտի տայ Կոտայքի մը: (500 քառ. մէթր կամ կէս արտաւար (տէմպէթ) էն պակաս հոգեւոր համար ազգաբարձրութիւնը չընդունուի):

Յօդ. 3. Ծխախոտ մշակող ամէն անձ, ամէն տարի, մինչեւ հոկտ. 15, այդ տարուայ ընթացքին ունենցած բերքին քանակը, ծխախոտին տեսակը եւ քիւրի հաշիւով քանակը յայտարարով մը ու իր գիւղի մուխթարին միջոցաւ պարտաւար է տեղեկացնել մալ միւստիքին:

Յօդ. 4. — Ծխախոտ մշակող կամ մշակելու տուող ամէն անձ իր արախն մէջ գտնուած ծխախոտի արմատները, ամէն տարի մինչեւ հոկտ. 15 քաղցիւր պարտաւար է:

Յօդ. 5. — Ծխախոտ մշակողներ պարտաւար են կառավարութեան:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Ս. Նշան Ազգ. Երկա. Վարժարանի Հոգաբարձութիւնը կուգայ յայտարարել յարգոյ հասարակութեան թէ ներկայ 1930—1931 կրթական տարեշրջանի աշակերտաց արձանագրութիւնը կ'ուխի Սեպտ. 20ին, իսկ կանոնաւոր դասաւանդութիւնը Հոկտ. 1-ի, օր:

Ուստի այս պարագան հաղորդելով Հոգաբարձութիւնն, լիալոյս է որ ամէն հայ ծնողք պիտի նախընտրեն Ս. Նշան Ազգ. Վարժարանը, որ տարիներէ ի վեր ամէն ջանք թափած է կատարեալ ազգային եւ տոհմիկ դաստիարակութիւն մը տալու հայ աշակերտութեան:

Այս տարի նոր սյոթերով զօրացուած է ուսուցչական կազմը եւ ըստ ծրագրի-կանոնադրի Ֆրանսերէնի Արարեքէնի պահերը աւելցուած են: Վերի կարգերու գիտական եւ թուաբանական ճիւղերը պիտի աւանդուին ֆրանսերէն լեզուով, մասնագէտ ուսուցիչներու կողմէ, որով վարժարանիս ընթացքը լրացնող բոլոր աշակերտները առանց դժուարութեան պիտի կրնան ունէ ֆրանսական Լիսէի չորրորդ կարգին հետեւիլ:

Ամէն ջանք թափուած է ծրագրի արամադրութիւնները կարենալ գործադրելու եւ ներկայ տարեշրջանը աւելի եւս արդիւնաւորելու համար. յարգոյ հասարակութիւնը վստահ պէտք է ըլլայ թէ իր ըրած գերադաս զոհողութիւնները ի գերի չպիտի ելլան:

Ս. ՆՇԱՆԻ Ա.Զ.Բ. ԵՐԿԱ. ՎԱՐՃԱՐԱՆԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԻՒՆ

4-2

ԼԻԲԱՆԱՆ ԿԸ ԾԱԽՈՒԻ

Անանեան Գրատուն Պէյրուս

Մ. Նաճարեան « Նահր

Տօնիկեան Գրատուն « (Բէմք)

Բարսեղ Շահինեան Դամասկոս

Կրթ. Պաշտօնեայ

ՈՒՋՈՂՆԵՐՈՒ

«ԼԻԲԱՆԱՆ»-ի Վարժութիւնը իր արամադրութեան ներքեւ ունի կարող ուսուցիչներ եւ Մանկապարտիզականներ:

Շահագրգռուող Ազգային Մարմիններէ կը խնդրուի գիւմել Վարժութիւնն:

ՀԱՅԿԱԿԱՆ ԼԻԲԱՆ ԿՈՇԿԱԿԱՐԱՏՈՒՆ ԹՈՐՈՍ ՀԱՃԻ ԳԵՈՐԳԵԱՆ



Կանանց, տրանց եւ փոքրիկներու համար ոյժ նորաձեւ եւ ամէն տեսակ կոշիկներ ազատ պրանք կամ պատրաստ, ՅՈՅԺ ԶԱՓԱՒՈՐ ԳԻՆԵՐ ԵՒ ՃՇՏԱՊԱՋ ԴՈՐՈՒ Հասցէ Վախիա պալ. ձեմիլ Պէյրուս:

ՅԱԿՈՐԵԱՆ ԵՂԲԱՐԻ

ՍՈՍՋԱԿԱՐԳ ՀԱՅ ԶՈՒԼԱԳՈՐԾ

Կը ձուլեն ամէն տեսակ կողպարներ գործիքներ, կը ծախեն եւ կընթողեն ԲՐԻՄԻՍԻ մէջ տեսակ գործիքներ

ԶԵՓԵՒՈՐ ԳԻՆ ԵՒ

ԽՆՆՄԵՆ ԸՇԻՆՏԵՆԻ

ՀԱՍԵ ԹԱՐԻԿԷԼ ՀԱՍ ԹԻԻ 96 ՊԷ ԼՈՒԹ



Ներկայացնելով կ'ուխ ու արձանագրելով տար իրենց մշակելիք ծխախոտը:

Յօդ. 6. — Անանց ՄԱՋ ՄԻՓԻՏԻՓԻՐԻ արտոնագրին ծխախոտ մշակող գիւղերուն ներքիւ չէ ունէ արտադրութիւն: Այն արտոնագիրը կը տրուի երբ կը հաստատուի թէ ծխախոտը պիտի յանձնուի գործարարին մը, միւստիքի մը, կամ ծխախոտի. համար վաճառականի մը եւ կամ գործարարութիւն մը հետ պիտի տրուածուի:

Փոխադրութեան արտոնագրին մէջ պէտք է յիշուի փոխադրութեան ծխախոտի քանակն ու տեսակը, զրկուելիք վայրն ու անձին անունը: Ծխախոտը աւելող տեղը սոյն արտոնագիրը պահելով, փոխադրուած ծխախոտին քանակը եւ թուականը պիտի արձանագրէ:

Յօդ. 7. — Եթէ արտոնագրի տրուելէն առաջ, ցանուելիք ծխախոտին ընթացքը կամ մէկ մասը ունէ պատճառաւ փակուել կամ կորսուել, ապա ունէ օրու անխնայ պէտք է որ տեղեկացնէ Գաղաթի մալ միւստիքին:

որ այս մասին քննութիւն պիտի կատարէ: Արտոնագրի տրուելէն վերջ, ունէ պատճառով մը եթէ մշակուած ծխախոտը վնասուի, Մինչեւ ունէ օր պէտք է տեղեկացնել մալ միւստիքիին որ այս մասին քննութիւն պիտի կատարէ:

Յօդ. 8. — Երեւմտական իշխանութիւնը տարուան բոլոր եղանակներուն մէջ եւ ուղած ժամանակ մշակողներու այցելելու եւ ցանուած ծխախոտին արձանագրութեանց համապատասխան ըլլալը ճշգրտելու իրաւասու են:

Գ. Մաս

ԾԽԱՆՈՒՄԻ ԾԽՈՒԹԻՒՆ ԵՒ

ՎԱՋԱՌԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Յօդ. 9. — Ծխախոտի վաճառականութիւն եւ գնում ընելու ուղղութիւն ամէն անձ, ամէն տարի Դեկտեմբերի սկիզբը վերանորոգելու եւ 200 Ս. սակ տարեկան տուրք վճարելու պայմանով արտոնագրի մը պէտք է տանել Երեւմտական խաւարարութեան:

(Շարք)